Ամենայն թղթակցութիւնք և վճարմունք պարտին ուղղուիլ առ խմբագրութիւն։
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
(Ամէն երկրի համար)
Տարեկան 2 Թալէր
Մէկ թիւը 10 Սէնթ

ՀԱՅՐ

All communications and subscribtions to be addressed to
DR. M. S. GABRIEL,
EDITOR OF THE "HAIK"
An Armenian fortnightly.
Political and Hygienic
202 W. 23ed ST., NEW YORK.
TERMS TO SUBSCRIBERS.
For all countries, One year $2.00
Single copy, ... $0.10

ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

Editor—M. S. GABRIEL, M. D. ՏԷՐ-ԽՄԲԱԳԻՐ—Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ
202 W. 23ed St., New York City, U. S. America.

Ա. ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ, ՓԵՏՐՎԱՐ 15 1891 ԹԻՒ 4

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Օսմանեան Պետութիւն եւ Սուլթան Համիտ Բ.—Նամակ Կիլիկիաէն.— Նամակ Կիլիկիաէն.—ՀԱՅՐ.— Ջուրն իբր դարման.—Հայոց գործ գտնելու խնդիրն.—Անգղի երէն լեզուի ծրի դասեր Հայոց համար.—Հայասէր Ամերիկացիներ.— Այլ եւ Այլ լուրեր.— Կարեւոր որոշում մը։

Entered as second class matter at the New York, N. Y., Post Office, Dec. 15th 1890.

ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆ ԵՒ ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ Բ. Բ.

Օսմանեան վարչութեան ներքին և արտաքին դժուարութիւնք գլխաւորապէս կ'ապրերանան անտի որ Տաճկաստան, կոչուած երկիրն միայն Տաճիկներու երկիրն չէ, այլ բազում ազգերու, գեղերու և լեզուներու խառնուրդ մ'է։ Այսպիսի այլասեռ բաղադրութեամբ զանգուած մի կառավարել յոյժ դժուարին գործ է զարդիս ինչպէս եղած է ի հնումն։ Սուլթան Համիտ Բ. բաղձալով այս դժուարութիւն բառնալ կամ նուազեցուցանել, որդեգրած է ձուլման քաղաքականութիւնն և կը նկրտի, որքան հնար է, խառնուրդն մաքրել և պարզել։ Յայսմ նորին վեհափառութիւն կը հետեւի աւելի յառաջադէմ ազգայ քաղաքականութեան որք զԼեհաստան և զԱլսաս Լորէն ամենայն հնարիւք կը հնարին ի միասեռութիւն բերել սիրոյ այն երկիրներուն որոց կցուած են։

Լռիկ բայց ազգու կերպիւ պալատն կ'աշխատի Արաբներն և Քրդերն թրքացնել։ Արդարև ամէն Արաբ կամ Քուրդ որ Օսմանեան վարժարանի մէջ ուսում կ'առնու և կառավարական պաշտօն կ'ընդունի, կը խօսի թրքերէն, կը վարուի թրքօրէն և կը թրքանայ։ Եթէ Վանայ և այլ ներքին Հայ գաւառայ մէջ թրքեր կան, նոքա մեծ մասամբ թրքացեալ Քրդեր են։ Գալով Հայ տարրին, որովհետև նա քրիստոնեայ է կրօնիւ, չկրնար թրքանալ որպէս Մահմետական ցեղերն կը թրքանան, և Սուլթանի քաղաքականութեան առջև դրգռիչ արգելքի պէս կը կենայ։ Շատ ուրախ պիտի լինի պալատն եթէ այս անմարսելի և անընկղմելի Հայ տարրն չքանայ կամ իբաց վտարի Օսմանեան պետութենէն։ Տարիներէ հետէ այս եղած է պալատին քաղաքականութիւնն, ինչպէս ակներև է ամէն անոնց որք աչք ունին տեսնելու։

Ներկայ յօդուածի նպատակն չէ քննել թէ ներելի՞ է խեղճ ժողովուրդ մի չարչարել, հալածել, նեղել և կոտորել քաղաքական ծրագրի մի գործադրութեան համար։ Այդ մասին սաչափ միայն կ'ըսեմք թէ, ինչպէս կ'երևի Զեյթունի վերջին անցից վերայ թղթակցութենէն զոր ներկայ թուով կը հրատարակեմք, Օսմանեան պաշտօնէից եռանդնի գործադրել զյիշեալ ծրագիր կատաղի ամբարշտութեան վերջին ծայրն հասած է, և թէ հարստահարութեանց պարզ պատմութիւնն զնոյն ինքն Սուլթանն ստրատացնելու չափ սոսկալի է, եթէ է նա արդարև Սուլթան բարեգութ և մարդասէր։ Մեք սակայն այժմ ինդիրն կը քննեմք ոչ բարոյական այլ քաղաքական իմաստասիրութեան տեսակէտն, և կ'ըսեմք թէ թիւր է ցեղերն իրի ձուլելու և միական (Unitaire) քաղաքականութիւնն, որպէս կը գործադրուի այն յեւրոպացւոց ոմանց և յՕսմանցւոց։

Մասնաւորապէս Օսմանեան քաղաքականութեան վերայ խօսելով, նախ պէտք է նկատել թէ երկու տարբեր ցեղերու ձուլմանէն յառաջ եկող սերունդն ստորին կը լինի եթէ ծնող ցեղերու մին ստորին է, որպէս հաստատուած է աբ Գաթրըֆաժի նման մարդաբանից դիտողութեամբք։ Քուրդ ցեղն կարծեմք թէ զգալապէս ստորին է քան զԹուրքն, և եթէ Թուրքն ու Քուրդն խնամեանան, արդիւնքն կը լինի ծնեալ Թուրք սերնդեան ստորնացումն։ Հաւանական է թէ Օսմանցիք ցեղային միութեան հետ թուական աճումն ևս փնտռեն յայսմ. բայց մեծապէս կը սխալին եթէ այս կերպիւ բազմանալով կը կարծեն մեծ և զօրաւոր լինիլ։ Զինն 380 միլիոնի ահագին թուով ազգ մ'է, որոյ ժողովուրդն տարին 3 միլիոն կ'աճի, և սակայն մեծ և հզօր ազգ չէ։ Որքան ահագին թուոյ հասնի Թուրք ազգն, եթէ զուրկ գտնուի ճշմարիտ զօրութեան պայմաններէն, պիտի իյնայ քան զինքն փոքրաթիւ բայց գերազանց ազգի մի իշխանութեան ներքև, ինչպէս որ Հնդկաստան իւր 2-300 միլիոն ժողովուրդով ինկած է

վոքը Բրիտանական ազգին իշխանութեան ներքև։

Գալով զՀայ տարրն թրքացնելու խնդրոյն, կ'ըսեմք նախ թէ անկարելի է ուշիմ և իր ազգային գոյութեան գիտակցութիւնն ունեցող ազգ մի, որպիսի է Հայն, ջնջել կամ ընկղմել։ Հակահայկական քաղաքականութիւնն որով ջանք կը լինի զՀայն իր ազգութենէ հանելու, հզօր գերգիւ մ'եղած է զնա արթնցնելու, զանտարբերն ազգասէր ընելու, զասգասէրն՝ հայրենասէր։ Երկրորդ, կը սնդեմք թէ Պալատն իսկ իր շահուց շարաշար կը վնասէ հայ հպատակներն ակարացնելով կամ վտարելով։ Հայն իրրև հանդարտ, զգօն և վաճառական ժողովուրդ՝ Օսմանեան Պետութեան լաւագոյն նեցուկն և հաստատամագոյն օժանդակն եղած է, և կը սխալի նա որ կը կարծէ թէ Հայն գլխէ եղած լինելով այնպէս չկրնար ծառայել այսուհետև։ Պարսից Շահն յայսմ մասին աւելի զգօն քաղաքականութեան կը հետևի, նա կը ջանայ զՀայ տարրն քաշել իր սահմանաց մէջ, մինչ Սուլթանն կը բաղձայ վտարել։ Ճշմարիտ ըսելով Սուլթանն պարտէր գուրգուրալ իր Հայ ժողովրդեան վերայ իրրև այնպիսի ցեղի մի վերայ որ ամենայն քաղաքական և զինուորական փառքէ յանցելումն յարիրանալու չափ կշտացած՝ հասած է այն հասուն և խելօք տրամադրութեան յորում իր բոլոր փառասիրութիւնն է խաղաղութեան պարսմանց, արուեստից, վաճառականութեան և մշակութեան նուիրել ինքզինք յօգուտ իր և իր դրացեաց։ Այնպիսի ժողովուրդ մի անտանելի հարստահարութեանց և բարբարոսութեանց մատնելով զրգռել—չեմ ուզեր խիստ բայտարութիւն գործածել—կարի սխալ քաղաքականութիւն է։

Ո՞րն է ուրեմն լաւագոյն քաղաքականութիւնն Օսմանցւոց համար։

Մեք, հիմնելով մեր կարծիք պատկառելի հեղինակութեանց վերայ, կը յայտարարեմք թէ կայ եղանակ մի, և է մի միայն հնարաւոր եղանակն, թուրքն մեծ և հզօր ազգ մը ընելու, Օսմանեան պետութիւնն իր կորուստէն փրկելու, Հայն եւ Արաբն գոհ հպատակներ ընելու, ցեղային դժուարութեանց պատճառն բառնալու, եւ Թուրական հզօր պետութեան քով զՕսմանեանն յարգելի եւ պատկառելի դրացի մը ընելու։ Օսմանեան Պետութիւնն վերակազմելու եւ փրկելու այդ եղանակն է զոր պիտի բացատրեմք մեր Գ. յօդուածով։

(Շարունակելի)

ՆԱՄԱԿ ԿԻԼԻԿԻԱԷՆ

Զէյթունի վերջին Անցք

Զէյթուն Մարաշի հիւսիսային արևելեան կողմն կիսնայ, և կեդրոնն է Հայաբնակ գաւառակի մի որոյ գլխաւոր ճիւղերն են Ֆըրնըզ, Ալապաչը և Մըխալ։

1880 Յուլիսին Հալէպի կուսակալն Մարաշի կառավարիչն տեսնել եկաւ, և որքան որ կարելի եղաւ ուսուցել, եկաւ Զէյթունի մասին ծրագիր մը յօրինելու նպատակաւ։ Երբ կուսակալն վերադարձաւ ի Հալէպ, Մարաշի կառավարիչն ալ տասանորդներն վճառելու պատճառանօք գնայ ի Զէյթուն։

Ստոյգ աղբիւրներէ առնուած տեղեկութեանց համեմատ՝ կառավարիչն առաջարկած է Զէյթունի զօրաց հարապետին յանկարծ զարնել զՀէյթուն. առաջարկ, զոր կը մերժէ հազարապետն։ Յայնժամ կառավարիչն Սալպատանի և Կէօքսիի կողմերու Զէյրքէզ գիւղերուն գաղտագէս պատուիրակ և նամակ յղելով կը յորդորէ զնոսա միարանիլ և պատշաճագոյն զարնել Զէյթունն և շրջակայ Հայ գիւղերն, վստահացնելով թէ իրենք յետոյ դիւրաւ պիտի կրնան արդարանալ, և սակայն Զէյրքէզներն եւ կը մերժեն անսալ այս թելադրութեան. Կառավարիչն յուսահատած՝ կը սկսի քաղցրութեամբ վարուիլ Զէյթունցւոց հետ. այդ միջոցին Զէյթունի երեւելիներուն միոյն հարսնիքին առթիւ քաղաք եկած կը լինին լեռը քաշուածներն ալ ուստանք, որոց հետ կառավարիչն շատ սիրով կը խօսի խրատներ կուտայ և 60 մէճիտիյէ նուէր մը։ Սակայն Զէյթունն հարուածելու նպատակն դադար և չատ կերպերով յառաջ տանիլ կը շարունակէ։ Զէյթունի տղայքն



44. Զիրունցի.

ճրիատէս պատուաստել կուտայ թունաւոր պատուաստով, և պատուաստեալներուն ամէնն ալ, առանց բացառութեան կը մեռնին։ Եւ այն օրերն ի Զէյթուն կը գանուէի և աչքովս կը տեսնէի ամէն առտու բազմաթիւ մանուկներու թաղումը։ Եւ կուլայի, և կառավարիչն կը բերկրէր լսելով թշուառ ծնողաց դառնակսկիծ ողբն։ Նաև այս միջոցին էր որ ի Զէյթուն տեսնուող ամէն պանդուխտ Հայ ձերբակալուելով կը դրկուէր ի Պոլիս կամ այլուր։

Անկէ ետև անիծեալ այս կառավարիչ կը գործածէ ի Զէյթուն բնակեալ Թրքերն (իրր ութ ընտանիք միայն կան) իր դիւաշունչ նպատակն աւելի ևս յառաջ տանելու։ Զէյթունի Թրքերն լեզուաւ, երևոյթով, սովորութեամբ և ամենայնիւ նման են Զէյթունի Հայոց։ Կառավարիչն այս Թրքաց երկուքն կը յղէ շրջակայ Հայոց, նախ ի Հաճին, ուր, ըստ հրահանգաց կառավարչին, Զէյթունցի Հայ կը կերպարանին և իրր Զէյթունցւոց դաղտնի պատուիրակներն կը խօսին, պատմելով թէ Զէյթունցիք կառավարչէ-

թեան պալատն և զօրանոցներն յարձակմամբ առնուլ կուզէն, և կը խնդրեն որ օգնեն իրենց։ Երկու Թրքերն կիրակի օրն չապիկ հագնելով տիրայութիւն անգամ կը նեն եկեղեցւոյն մէջ, այնպէս որ Հաճնոյ Հայերն բնաւ չեն տարակուսիր ասոնց անկեղծութեան մասին։ Երբ Հաճընցիք կը հաւանին առաջարկին, պատուիրակներն կը խնդրեն որ, Իլիուլի վստահութիւն Զէյթունի գլխաւորաց, նամակաւ մի յայտնեն իրենց հաւանութիւնն։ Երեք կամ չորս հոգիներէ ստորագրեալ նամակ մը կը ստանան այսպէս, և կը տանին կը յանձնեն զայն... կառավարչին։ Ասոր վերայ էր որ 10-15 Հաճընցիներ ձերբակալուեցան։

Զէյթունի Թրքերն կառավարչին ծրագրէն տեղեակ լինելով կը սկսին այդ միջոցին նորօրինակ ընթացքի հետեւիլ. ոչ ևս են առջի հլու և հպատակ Թրքերն, կը յոխորտան, կը սպառնան, աղջկանց և կանանց հանդէպ անպատիւ փորձերու կը մատնուին։ Զէյթունցիք այս վատ Թրքաց մին պատառ պատառ կ'ընեն։

Դժբաղդարար Հայ մատնիչք ալ չեն պակսիր. այդ միջոցին Ֆըրնըզի հայ միւտիրն, վատանունն Պըլտըր օղլի, կ'երթայ կառավարչին (որ յայնժամ Ի Մարաշ վերադարձած էր) կը պատմէ թէ Ի Զէյթուն եւ Ի շրջակայս բազում զինուորական հրայաններ եւ ռազմամթերք կը ցրուին։ Անհիմն զրպարտութիւն։ Կառավարիչն խիստն հեռագրատունն կերթայ, և հեռագրութեամբ կը զրպարտի ժամերով։ Անկէ կուգայ «Մէնզիլսի Իտարէն» որոյ Հայ անդամներն անարդանօք կը վռնտէ դուրս։ Նոյն երեկոյին Մարաշի զօրայ մէկ մասն առնլով կ'ուղեւորի դէպ ի Զէյթուն։

Զէյթունի Համիտն վերայ կը հանդիպին արան հերկող Ալապաշյի Հայու մի և կառավարիչն ու զօրք իրենց կատաղութիւն անոր վրայ թափելով նախ զայն կը սպանեն չարաչար։ Երբ Զէյթունի հանդիպակայ բլրոյն վերայ հաստատուած Օսմանեան զօրանոցն կը ժամանեն, կառավարիչն հոն կը թողու զօրքն և իրեն հետ 100 զինուոր առնլով կ'իջնէ ի Զէյթուն, կ'երթայ ի պալատ, և երեւելիներն առ ինքն կոչելով կըսէ. «Անմիջապէս կը պահանջեմ ձեզէ ձեր ապստամբներն։» Երեւելիք կը պատասխանեն թէ լեռն քաշուած ապստամբներն իրենք չեն կարող բռնել։ Կառավարիչն հրայայտ սպառնալեօք կը պնդէ իւր պահանջի վերայ։ Վերջապէս երեւելիք փորձ մ'ընել յանձն կառնուն. կառավարիչն ալ նոցա երկու ժամ պայմանաժամ կը շնորհէ։ Երեւելեաց պալատն մեկնելն ուր կամ տասը վայրկեան յետոյ կառավարիչն հրաման կ'ընէ զօրաց որ Զէյթունի Պօզպայրը կոչուած թաղն հրացանի բռնեն (ապստամբք մեծ մասամբ այդ թաղեցի են։)

Եւ ահա պարտերազմ մը կը սկսի։ Զէյթունցիք դեռ իրաց նշանակութիւնն լաւ հասկցած չլինելով՝ Ի սկզբան միայն վեց հոգիներ կը դտնուին զօրաց դէմ դնելու։ Շուտով ստուար դունտ մի զօրանոցէն օգնութեան կուգան կառավարչին, և իրր 400 զօրք կը պատերազմին Հայոց դէմ։ Հայ պատերազմողք-որք ուրիշ բան չէրին բայց եթէ անձնապաշտպանութիւն-էին իրր 80 հոգիներ, և սակայն կրցան երկու ժամ հայկարար դէմ դնել իրենց հինգպատիկն եղող լաւ զինեալ զօրականին։ Կառավարիչն Զէյթունի քաջերէն մեծապէս տագնապեալ՝ նորէն օգնութիւն կը խնդրէ զօրանոցէն, և այս անգամ ժխտական պատասխան կ'ընդունի։ Ասոր վերայ Տաճիկ զօրքն բոլոր կը թողուն իրենց զէնքերն և «Թէսլիմ իզ» կաղաղակեն Զէյթունցւոց։

Թէպէտ Հայ պատերազմիկներն բոլոր թուրք զօրքն ջարդել կ'ուզեն յայնժամ, բայց իրենց գլխաւորներն դէմ կը կենան այդ բանին և զէնքերն դարձեալ զօրաց դարձուցանելով, զայնս՝ հանդերձ իրենց ժանտ և խայտառակ կառավարչաւ՝ կը տանին մինչև զօրանոցն քարաքէն դուրս։

Յետ պատերազմին կը տեսնուի թէ Տաճկաց կողմէն 12 զինուոր մեռած և 35 վիրաւոր կայ, վիրաւորելոց համարին մէջ լինելով հաղարապետն ինքն։ Զէյթունի քաջերէն ոչ մի կորուստ եղած չէ։

Սակայն յետոյ է որ կառավարիչն փութով զօրք և թնդանօթներ բերել տուաւ Հալապէն և Ուրֆայէն, և ամէն որ կը սպառնայր ոմրակոծել զ Զէյթուն։ Ի վերջ կոյս Նոյեմբերի բռնի առաւ Զէյթունի մատակայ Սատուածածնայ Վանքն և զօրքով և ձիերով լեցուց զայն։ Առաջնորդ Վանահայրն ալ նենդութեամբ ձերբակալեց։ Ի Մարաշ և Ի շրջակայս ուր որ զէյթունցի գտնուի, առանց հարցափորձի կը ձերբակալուի։

Թշուառ զէյթունցի. արդէն աղքատիկ էր, այս տարի շնորհիւ բարեխնամ կառավարութեան այս դիւահնար արարքներուն բոլորովին չքաւորեցան։ Նոցա մեծ մասն այս ձմեռն պիտի անցուն՝ կիսամերկ և կիսասով վիճակի մէջ։ Վեց հարիւր մանկանցն դահիճն եղող այս նոր Հերովդէսին անասելի ժանտութեան և կեղրոնական իշխանութեան հայատեաց ընթացքին շնորհիւ արդարև ճգնաժամական ձմեռ մի անցուն՝ելու դատապարտեալ է հէք բայց քաջարի զէյթունցին։

Ո՜ օտարարնակ Հայրենակիցք, գթացէ՛ք, գթացէք այս թշուառ քաջերուն։ ԿՌԱՆ,

---

ՆԱՄԱԿ ԿԻԼԻԿԻԱՅԷՆ

Կիլիկիա... 13Նոյ. 1890

Կիլիկեան Հայաստանն պարտեալն կը վերադառնամ։ Նախ պարտեցայ «Կեռավուր տաղն», յետոյ անցայ «Էյպէլի» և Գըզլըգ Խանի կողմերէն Անթաքիա։ Մէկ երկու օր հոն մնալէն վերջ անցայ «Պիթիաս», «Եօզան օլուք» «Խարբ պէյլի» Բէվսէ (°) Հայաբնակ գիւղերն, իրր 800—1000 տուներէ բաղկացեալ են, ամենն զուտ Հայ, առանց խարնուրդի, և մէկ մէկէ հապիւ կէս ժամ և կամ երեք քառորդ հեռուն։ Անկէ անցայ «Բէսապ» և իւր շրջակայ գիւղերն որոնք եւս կը բաղկանան 800—1000 տուներէ։ Պիթիասի և Բէսաբի շրջակայ հայաբնակ գիւղերն բոլորն ալ մէջերկրականի եզերքն են, ամենէն հեռաւորն ծովէն հապիւ երեք ժամ ի բացեայ է։ Ծովային յարաբերութիւն ունենալու և ծովագնաց լինելու շատ յարմարութիւն ունին իրենց դրից շնորհիւ, բայց ցաւալի է որ ցարդ օգտուած չեն։ Այս գիւղերէն Բէվսէ՝ լինուած է հին նաւահանգստէն 15 վայրկենի չափ վեր զառիթափի մը վերայ։ Ծովահայեաց ընտիր դիրքով։ Իրենց լեզուն խանդարեալ է արաբական և տաճկական բառից ողողմամբ, այլ սակայն սերտիւ յարեալ կը մնան

իրենց մայրենի, կամ որպէս իրենք կ'ըսեն՝ Բրիտանական՝ լեզուին։ Բարք և սովորութիւնք կրնամ ըսել թրքացեալ են, բաց ինքնապետական բազմանգամ ընտանեաց ապրելու սովորութիւնից զոր պահած են։

Այս լեռնական Հայք չունին ըստ բաւականին հող մշակելու, ունին գեղեցիկ պտղատիպեր, նարինջի, թութի և այլ ծառեր, և իրենց գլխաւոր զբաղումն է շերամաբուծութիւն տարւոյն մի մասին մէջ, և միւս մասն կրնամք չատերուն համար ըսել թէ կ'անցնի դատարկաշրջկութեամբ։ Ոչ բարձր վարժարաններ ունին և ոչ իսկ ծաղկոցներ։.....

Նամակագիրն թղթոյն մնացեալ մասն նուիրած է ցուցնելու թէ Կիլիկիոյ Հայք և մանաւանդ ուսեալ երիտասարդութիւնն որքան եռանդ ունին հայրենասիրական շարժումներ ընելու գործնական ուղղութեամբ թէ երկրին դիրք ո՞րպիսի գերազանց յարմարութիւն ունին այսպիսի շարժմանց համար, և կ'ողբայ որ ոչ առաջնորդ կայ բանիւրուն և ոչ նիւթական պատրաստութիւն։

Շերջիկն

ՀԱՅԿ

ՊԱՏԱՍԽԱՆ

Բարեկամք ոմանք բաղձանք կը յայտնեն զ« Հայք » ըստ մասին անգլիերէն եւ ըստ մասին հայերէն տեսնելու։ Այսպիսեաց կը պատասխանեմք թէ « Հայք » հայերէն պիտի մնայ եւ միայն հայերէն, վասն զի անոր նպատակն է Հայ գաղթականութեանց այժերն կազմակերպելով հզոր վիճակի մի բերելու փոխան ջատագովել, ինչպէս նաեւ Ամերիկայի Հայ գաղթականութեանց շահերն հոգալ։ Եթէ Հայքն ըստ մասին, կամ անոր միայն մէկ երեսն գոնէ, որպէս մի քանիներ կը թելադրեն, անգլիերէն ընեմք, այդու անգիտանալ կեղծած պիտի լինիմք ինչ որ արդէն պանծալի ձեռնհասութեամբ կը կատարուի Տիար Զերպի L'Armenie-Armenia-ն, որ այժմ մէկ ֆրանսերէն և մէկ անգլիերէն թերթերէ կը բաղկանայ իրօք թէև կցեալ։ Մեզ կը թուի թէ Ամերիկայի Հայոց պարտականութիւնն է այդ թերթն տարածել ասա Ամերիկացւոց մէջ իբրև թերթ արժանի քան զամենայն ուսեալ և բանիմաց օտարականաց ուշադրութեան։ Եթէ ոմանք փափաք ունին անպատճառ անգլիերէն թերթ մի Հայկական խնդրոյն վերայ այս երկրի մէջ հիմնել, այդ պիտի լինի անոնց ձեռքով որք քաջ լեցուած պէտքերն վերստին լեցնելու—կառքին հինգերորդ անիւն լինելու—հակատնտեսական գաղափարին կը ծառայեն։

ԽՆԴԻՐ

Մեք չեմք ուզեր միշտ խօսիլ մեր թերթի նիւթական կարօտութեան վերայ, սակայն հարկ է յայտարարելամենայն Հայ գաղթականութեանց թէ մեր բաժանորդներու թիւ կարի անբաւական է դեռ։ Եթէ մեր քսակ ներէր, յօժարութեամբ կը յղէինք Հայքն ամէն կողմ և ամենուն, չվճարողաց անգամ։ Բայց դառն հարկի վերայ կայ խնդրել որ ամէն անոնք որք զՀայք քաջալերութեան անարժան չեն համարիր, փութան ոչ միայն բաժանորդ գրուիլ ինքեանք, այլ եւ ուրիշները համոզել։ Շատուր են այնպիսիք որք առանց մեզի և համոզիչ խօսքերու չեն որոշեր բաժանորդ գրուելու։ ամէն տեղ ուրեմն խոհուն եւ եռանդուն հայրենակցայ կը մնայ Հայքի հոգածութիւնն ինքնայօժար ստանձնելու, որովհետև անկարելի է խմբագրութեան այսպիսեաց ամենուն անուններն և տեղն գիտնալ և յատուկ նամակ ուղղել։

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Պատշաճ կը համարիմք յայտարարել թէ, հակառակ ամենայն դժուարութեանց եւ հակառակորդաց, որոշած եմք մեր թերթի հրատարակութիւն շարունակել առաւելագոյն պարագի ներքո։ Իսկոյն անգամ պայմանաւ։

Նաև կը փութամք մեր արգոյ ընթերցողներուն խնդրել թէ բաժանորդագրութիւնք տարւոյն որ ամսոյն մէջ ալ որ տեղի ունենան, կը հաշուին Յունվար 1, 1891 էն, կամ որ նոյն է Հայքի Ա. թուէն։ Նաև փափաքելի է որ բաժանորդագրութիւնք ամբողջ տարեկան լինին, որպէս զի խմբագրութիւնն նուազ ժամանակ վատնէ հաշիւներու և թղթակցութեանց համար։

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Ցոյժ շընորհակալ եմք այն առատասիրտ աղգայիններէ որք մեր ձեռնարկի նպաստ եւ քաջալեր ընծայեցին իրենց նուիրատուութեամբք, ինչպէս Մեծ. Տիար Պօղոս Սարրեան Նիւ-Եորք) որ նուիրեց ութ թալէր, և հայրենասէր ոմն (Ուսղբը) որ նուիրեց տասն թալէր։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Կը խնդրեմք մեր ազգայիններէն, մանաւանդ անոնցմէ որք իրենց գործին բերմամբ շատ քաղաքներ կ'այցելեն, գրել մեզ որքան հնար է կատարեալ վիճակագրութիւնն Հայ գաղթականութեանց այս կամ այն քաղաքինկամ Նահանգին։ Կը բաղձամք գիտնալ Հայոց թիւն, զբաղումն, թէ Տաճկաստանի որ քաղաքէ և երբ եկած է, քաղաքացի եղած է թէ ոչ, ամուսնացեա՞լ է թէ ամուրի, եթէ ամուսնացեալ է, արդեօք ամուսինն Հա՞յ է թէ անգլիացի։

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ ՑԱՄԵՐԻԿԱ

Հայկական Միութիւն հիմնեալ է ի Նիւ-Եորք 1886 փետր. 13ին. ուսոմ և ներկայ ամսոյ 13ին յիշեալ ընկերութիւնն կը թեւակոխէ իւր վեցերորդ տարին։ Արժան է արագ յեսահայեաց ակնարկ մի նետել նորա անցեալ հինգ տարիներու պատմութեան վերայ։

Ընկերութեանն նպատակն է «Ամերիկայի Հայոց մէջ միութեան կապ հաստատել, ազգային գգացումներն մշակել և ազգօգուտ ձեռնարկութիւններ ընել։» Գովելի նպատակ արդարև, այլ տեսնենք թէ այդ նպատակի համաձայն գործած և արդիւնարեր եղա՞ծ է միութիւնն։

« Միութեան կապ հաստատել » կրցած է Նիւ-Եորքի և շրջակայից Հայերուն մէջ, իւր նիստերու ամէն մէկն բաց եղած են անդամ չեղող հայրենակցայ առջև անխտիր, և միջոց եղած են Հայերն իրարու ծանօթացուցանելու, այնպէս որ կարելի եղած է իրարու օգնել խորհրդով և այլ եղանակօք։ Մայր Հայրենիքէն նոր եկող կամ Ամերիկայի ուրիշ նահանգներէն այլ և այլ առթիւ Նիւ-Եորք եկող հայրենակիցք ևս ընդհանրապէս իրրև հիւր ներկայ

գանուած են նիստերուն, և ոմանք առենախօսած ալ են։

«Ազգային զգացումներն մշակել» յաջողած է Միութիւնն այն տարեդարձի հանդէսներով, զոր կատարած է ամէն տարի Վարդանանց Նահատակութեան տօնին հետ, և ուր ամէն անգամ ներկայ գտնուած է հարիւրներէ բաղկացեալ երկսեռ բազմութիւն մի Հայոց։ Այս հանդէսներն եղած են զուարճալի մանգամայն հրահանգիչ, և հայերէն ու անգլիերէն առենախօսութեամբ և երգերով միջոց եղած են արթնցուցանելու և մշակելու հայրենասիրական զգացումներ և խորհուրդներ։

Հանդէսներէն զատ Միութեան սովորական նիստերը, որք տեղի կ'ունենան ամէն երկու եօթնեակն միանգամ, չարաթ երեկոյ, ընդհանրապէս ծառայած են հայոց ազգային և բարոյական զգացումներն և խորհուրդներն սնուցանելու, ինչպէս պիտի ուսանուի ճառախօսութեանց և կանոնաւոր վիճաբանութեանց ցանկէն զոր յառաջիկայ թուով պիտի հրատարակեմք։ Անցեալ հինգ տարիներուն մէջ ոչ նուազ քան քառասուն և ութ բանախօսութիւններ և առենախօսութիւններ եղած են Միութեան նիստերուն մէջ և ասոնց անգամ կանոնաւոր վիճաբանութիւն եղած է կանխաւ ծանուցեալ նիւթի մի վերայ։ Նիւթերն եղած են ազգային, պատմական, ընկերական, առողջաբանական, քաղաքական ևն.

«Ազգօգուտ Ձեռնարկութիւններ ընել» ու անփոյթ գտնուած չէ Միութիւնն, և նախ, այդ նիստերն, փիլ բացառութեամբ, միջոց եղած են Հայերէն լեզուն խօսիլ և ընելտալը, անտեսական, առողջաբանական և այլ օգտակար նիւթերու վերայ ծանօթութիւններ հաղորդելու ներկայիս բազմութեան։ Բայց ընդհանուր օգտակարութեան հետ ընկերութիւնն ունեցած է նաև առիթ այլև այլ ազգօգուտ ձեռնակութիւններ ընել։ Ոչ միայն խորհրդատուութեամբ, այլ գրական նպաստիւք օգնած է անհատից ինչպէս նաև հասարակութեանց։ Միութեան ձեռամբ եղած գրական օգնութեանց կարգէն կը յիշեմք հետեւեալներն։—Նոյ. 26, 1887ին ձեռնարկեց ի նպաստ Զէյթունի հրկիզելոց հանգանակութեան մի, որոյ արդիւնքն եղաւ իբր 250 թալեր։—Յունվար 7, 1888ին մը մի և իր դասեր համար հանգանակեց 16 թալ։—Յունվ. 5, 1889ին հանգանակեց 17 թալէր, որով գորգ մի նուէր տրուեցաւ այն անձին որ ի Բէյսալ Կարալն հասնող նոր ելակ ազգայնոց կ'օգնէր իրը թարգման և առաջնորդ։—Ապրիլ 27, 1889ին հանգանակեց 25 թալէր ի նպաստ Ռուսաստանցի Հայուհւոյ մի, որ ի Ռուսիա դառնալու համար կարօտ էր օգնութեան։—Միութեան օգնութեամբ նաև հանգանակեցաւ կէսրեւոր գումար մի ի նպաստ վերաշինութեան Ս. Փրկչի Ազգային Հիւանդանոցին։—Հայկական Միութեան գովելի ձեռնարկներուն մին ալ ազգային մատենադարան մի ստեղծելու սկսիլն է Փետր. 2, 1889ին։ Մատենադարանն դեռ փոքր է, այլ կը պարունակէ ինչ ինչ ընտիր հատորներ զորս հայրենակիցք նուիրած են։ Յուսալի է թէ ուրիշ բազումք այսպիսի նուէրներով ճոխացունեն այս գրատունն, որոյ անհրաժեշտ պէտքունի գոյութիւնս։ Այս գրատուն ազատատանարան պիտի լինի Տաճկաստանէն աքսորեալ պատուական գրոց ինչպէս երկիրս է ազատատանարան աքսորեալ հայրենասիրաց։

Շարունակելի

ՋՈՒՐՆ ԻԲՐ ԴԱՐՄԱՆ

Ջրոյ բուժարանական բազմապիսի կիրառութիւններն ի միտ առնելու համար պարտ է յիշել այդ հեղուկի բնագիտական յատկութիւններն։ Զարմանալի է նա իւր կերպափոխութեամբք և յոյժ նրբահնար գործածութեանց կ'ընծայէ ինքգինք։ Ըստ աստիճանի ջերմութեան իբր սառոյց կը նստի, իբր ջուր կ'ընթանայ և իբր շոգի կը թռչի։ Փափուկ լինել և զմարմին փայփայել գիտէ, ինչպէս նաև կարողէ երկաթէ ճողի խստութեամբ ջախջախել։ Քան զայլ տեսնայն մարմին աւելի դժուար կը տաքնայ և կը պաղի, վասն զի մեծ քանակութեամբ ջերմութիւն համբարելու և կարի յամրապէս այդ ջերմութիւն դուրս տալու զարմանալի ատիճանաւ ընդունակ է։ Ջուրն իբր սառ աւելի թեթև է քան թէ հեղուկ ձեւին տակ, ուստի և աւազանաց և գետոց սառուցեալ մասնիկներն մակերեսին վերայ կը հաւաքուին և ցուրտ եղանակին մէջ որպէս թէ կամուրջ կը լինին, որպէս զի կենդանիներն չտիպուին ի լիւղ անցնիլ ցուրտ ջրոյ մէջէն, միանգամայն իբր ծածկոյ՝ սառուցեալ կեղեւն կը պահպանէ ջրոյ ստորնագոյն խաւերուն ջերմատիճանն։



Ամէն անոնք որք պաղ ջրով բաղնիք ըրած են, կը յիշեն անոր անմիջական և հեաեւորդ ազաւորութիւնները։ Սիրան արագ արագ կը բարախէ. շնչողութիւնն վայրկենական ընդմիջումէ մի յետոյ՝ աւելի խոր կը լինի։ Մարթին բոլոր մանրացուցական երակներն կը սեղմուին և արիւնն մարմնոյն ներսն կը քաշուի։ ասոնք են պաղ լոգանքի առաջին ազաւորութիւնք։ Այսմ կը յաջորդէ հակագործական կոչուած շրջանն. մարթային երակք կ'ընդլայնին և արիւնն մեծ քանակութեամբ կը վերադառնայ մարմնոյն մակերեսն։ Այս պահուն է որ լոգցոն հաճելի ջերմութիւն մի կը զգայ, բազկերակն նուազ արագ է, իսկ շնչողութիւնն աւելի խորին և շուտ կը կատարուի քան զսովորականն։ Մարմնոյն ջերմութեան

աստիճանն սակաւիկ մի կը նուազի, և այս երեւոյթ կը տեւէ իբր երկու ժամ։ Ջրային դրութիւնն այժ կառնու՝ և մարմնոյն ընդհանուր սննդաւորումն կ'երաշխաւորի։ Ախորժակն կը սրի և հանգստութեան ու զօրութեան ախորժ զգացում մի կը զգայ մարդ։

Ըստ ախտին և ըստ անհատական պայմանաց կը զանազանի ջրոյ գործածութեան եղանակն։ Ջրաբուժական հաստատութեանց մէջ մեծ ճարտարութեամբ կը գործածուին կերպ կերպ եղանակներ։ Մարմնոյ ամբողջն ընդհանրապէս կ'ենթարկուի ջրոյ ազդեցութեան, սակայն երբեմն հարկ կը լինի նորա մի կամ միւս մասին ուղղել ջրոյ ցայտուածն։ Ցուրն կրնայ անձրեւակերպ կամ սիւնաձեւ տեղալ մարմնոյն վերայ, առաւել կամ նուազ յորդութեամբ, առաւել կամ նուազ բարձրէն, ցուրտ, դաղջ կամ ջերմ աստիճանաւ։ Նաև երբեմն տաք և պաղ ջուր կը գործածուին փոփոխակի, կամ ջերմաստիճանն կրնայ տակաւ առաւելուլ կամ նուազիլ։

Բիւրաւոր սակաւարիւն կամ տկարարիւն երիտասարդք երկու սեռէն ևս ամէն տարի կը բժշկուին պաղ լոգանքի միջոցաւ։ Երեւակայենք երիտասարդուհի մի որոյ արիւնն աղքատացած է, դէմքն, շրթունքն ժոդոյն են, շունչն դիւրաւ կը սպառի, ախորժակն տկար է, բայց սրտի կամ թոքերու ախտէ բռնուած չէ։ Կրնայ այսպիսին վերստանալ իւր նախկին կայտառութիւն ջրոյ կանոնաւոր գործածութեամբ։ Թող օրն մէկ անգամ, կերակրէն առաջ, պաղ (այսինքն հարիւրմասնեան ջերմաչափով 10 կամ 15 աստիճան) ջրոյ ցայտուածի ներքև կայնի։ Առաջին օրերն տասն վայրկեան հարկ է տեւէ այս բաղնիք, յետոյ աստիճանաբար կրնայ մինչև քսան հարիւրերորդ տեւել։ Եթէ շատ վախկոտ է, թող նախ դաղջ ջրով սկսի և կամաց կամաց օր ըստ օրէ աւելի պաղ ջուր գործածէ։ Շարունակելի

ՀԱՅՈՑ ԴՈՐԾ ԴՏՆԵԼՈՒ ԽՆԴԻՐՆ

Յունվ. 29, 1891

...Խմբագիր «Հայք»ի.

Ձեր պատուական «Հայք»ի 3րդ. թուոյն մէջ հրատարակուած նամակն Տիար Պ. Յակոբեանի կը բերէ մեզ խիստ գովելի և կարևոր առաջարկ մը։

Գործաւոր Հայերն շաբաթը 3 թալէռնէն մինչև ութ թալէռ կընդունին, և այս վերջինն իրենք լաւ վարձք կը սեպեն։ Պատճառն ինչ է որ անոնք ստիպուած են չարաչար աշխատիլ անմաքուր գործարաններու մէջ և անմաքուր անբարոյական հարդոց հետ։ Արդեօք չկ'ան անոնց մէջ այնպիսիներ որ կարող են գոնէ պարզ տօմար մը բռնել կամ խանութպանի քով աշխատիլ, կամ թէ չկ'ան գոնէ Գերմանացի Հրէաին չափ լեզու գիտցողներ, կամ Իտալացիին չափ որ կարող ըլլայ անկիւն մը փոքր առուտուրով զբաղիլ, անկիւն մի, այ՛ս, որ սակայն աւելի մեծ տոկարէզ կ'ընծայէ քան թէ գործարանի մէջ շաբաթը 15 թալէռ առնուլն։ Ես ինքս հանդիպեցայ ուսեալ և կրթեալ երիտասարդի որ քանի օրեր անօթի մնալով ստիպուած է ոչինչ վարձքով մ' աշխատելու, և այս՝ Ամերիկայ դալէն երկու տարի վերջը։ Բայց երբ կերպով մը լաւ տեղ մ' առաջնորդուեցաւ, նոյն երիտասարդը իր գործին մէջ բարձր դիրք մը բռնեց։

Ուրեմն ինչ կրնանք ընել մեր գաղթական հայրենակիցներն յաջողութեան ճամբուն մէջ դնելու համար։ Սկզբնաւորութեան համար կարծեմ հետեւեալ կերպն օգտակար պիտի դառնայ։ Նախ, կեդրոն տեղ մը—Նիւ-Եորք—Տեար Յակոբեանի նման փորձառու անձանցմէ կազմեալ մարմին մ' ունենալ, որոյ գործն ըլլայ Հայ գաղթականութեան շահերուն և վիճակին վերայ խորհիլ։ Այս մարմինը իւր ձեռաց տակ ունենայ գրագիր մը ամսականով։ Նաև ունենան տարբեր քաղաքաց մէջ կարելի եղածին չափ ուսեալ և գործունեայ անդամներ, ինչպէս նաև պարտող գործօն անդամներ (գիտէք որ բաւական երիտասարդներ քաղաքէ ի քաղաք կը պարտին իրենց գործովը)։ Վերջապէս ունենան նաև նուիրատու անդամներ։ Թէ պարտող և թէ միւս գործօն անդամաց գործը պիտի ըլլայ տեղեկութիւն տալ թէ ուր Հայ կայ, ինչ կ'ընեն, ինչ գործեր կան շահաւոր, և ասոնց վերայ տեղեկութիւն տան ընկերութեան գրագրին։ Իսկ գրագրին գործը պիտի ըլլայ այս տեղեկութիւններուն տեղեկագիրն պատրաստել։ պիտի ունենայ տոմար մը յորում պիտի արձանագրէ եթէ կարելի է բոլոր Ամերիկայի Հայոց անուններն, հասցէներն ու գործերն։ պիտի հոգ տանի անգործ Հայերուն որոնց շատերն լեզու չգիտնալով կը նեղուին գործի մասին խօսելու։ Իսկ հոգարարձու մարմնոյն պաշտօնն ըլլայ գրագրին տեղեկագիրը քննել, խորհիլ, և գաղթականութեան նիւթական և բարոյական յաջողութեան միջոցներն գտնել և իգործ դնել։

Գանք ծախքերն գոյելու կերպին։ Իւրաքանչիւր անդամ վճարէ տարեկան փոքր գումար մը 50 սենթիմ մէկ թալէռ։ Անոնք որ այս ընկերութեան անդամ են։ մանաւոր ուշադրութեան առարկայ լինին։ Շատեր կան որ իրենց բարեկամաց հասցէն կը կորուսանեն, թող 12 սենթ ղրկեն գրագրին և խնդան։ Որոնք որ կը բաղձան գիտնալ թէ այսինչ քաղաքին մէջ Հայ կայ և ինչ գործով կը զբաղին, 27 սենթ ղրկեն գրագրին և տեղեկութիւն ընդունին։ Նաև կարելի է եկամուտի նոր ապրիւր մ'ալ ստեղծել 25, 50 սենթի և մէկ թալէռնոց տոմսակներ ղրկելով գործօն անդամաց, որոնք ծախեն զայնս անդամ չեղող Հայերու։ Վերջապէս այն մարդը որ ընկերութեան միջոցաւ գործի մտնէ, վճարէ մէկ կամ երկու թալէռ։

...Խմբագիր, չեմ ուզեր աւելի երկարել։ Թելադրութիւնն Տիար Յակոբեանի ազգօգուտ է, յոյս երկպատկեցաւ մեր գաղթականութեան վրայ. յուսամ թէ քիչ օրէն գործադրութեանը մասին ալ տեղեկանալու ուրախութիւնն կ'ունենամ։

ԹԱՓԱՌԱԿԱՆ։

ԱՆԴՐԻԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԶՐԻ ԴԱՌԵՐ ՀԱՅՈՑ ՀԱՄԱՐ

Ամէն անգամ որ գործաւորութեան դժընդակ լուծն յանձն առնող մեր հայրենակցաց վիճակն բարւոքելու վերայ խօսուած է, կրկին և կրկին նշանակուած է մեծ

պակաս մի, այսինքն թէ մերաղնեայք, փոքրամասն բացաւութեամբ, անգլիերէն բաւական չգիտեն ուստի և նուազ դիւրութեամբ կ'ընդունուին գործարանաց մէջ և աւելի դժուարութեամբ կը պահպանեն իրենց տեղերն։

Թէև արդէն կային անգլերէն ձրի ուսանելու պատեհութիւններ, ուրախ եմք ծանուցանել թէ վերջերս աւելի գոհացուցիչ կարգադրութիւն մ' ալ եղած է Նիւ-Եորքի Հանրային կրթութեան Պաշտօնէութեան կողմանէ, որ յատուկ դասատու կարգած է քաջ անգլիերէն և բաւական հայերէն գիտցող մէկն Հայոց համար։ Դասախօսութիւնք կը սկսին երեկոեան ժամ 7·30ին և կը տեւեն մինչև 9·30։ Բշ., Գշ., Դշ., և Եշ., երեկոյներն անգլիերէն կարդալ, գրել, անգլիերէնէ ի հայերէն թարգմանել, ուղղագրութիւն և խօսակցութիւն կը սովրին, իսկ ուրբաթ երեկոյներն՝ ձայնական երաժշտութիւն։

Ոչ միայն դասատուն ձրի է, այլ և թուղթ, դասագիրք, գրիչ, մելան և ամենայն ինչ ձրի կը հայթայթուին, ճիշդ ինչպէս բոլոր հանրային վարժարանաց մէջ։

Այս դասախօսութիւնք կը լինին Նիւ-Եորքի հանրային վարժարանց միոյն մէջ, որ կը գտնուի 23 րդ · Փողոցում, Ցարեւելք, Բ. և Գ. երորդ Էվընիւներու միջև, Grammar School արձանագրութիւնն կրող դպրոցին մէջ։

Այժմ Հայ ուսանողաց թիւն 30 է։ Դպրոցին վերատեսչութիւնն շատ գոհ է Հայ ուսանողաց կանոնաւոր ներկայութենէն։ Միայն ցաւալի է որ փոխանակ 30 ի հարիւր Հայեր չեն փութար օգտուելու այս պատուական պատեհութենէն զոր Նիւ-Եորքի կառավարութիւնն այն քան առատասրութեամբ կ'ընծայէ մեր բազմակարօտ գաղթականութեան։ Եթէ այսուհետև գտնուին մեր մէջ անգլիերէնի, տգէտ մնացած Հայեր իրենց վիճակէն գանգատող, յանցանքն իրենցն պիտի լինի որ անհոգութեամբ կը կորուսանեն այս գեղեցիկ պատեհութիւն, և փոխանակ երեկոներն երկու ժամ անգլիերէնի ուսման նուիրելու, աւելի կը սիրեն երեք ժամ զրարանութեան նուիրել։

ՀԱՅԱՍՅԷՐ ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐ

Բրօֆ. Ուիլիամ Ուէլլ, որ Եուներն Համալսանանի (Union University) ուսուցչապետներէն է, ժամանակէ մ'ի վեր կանոնաւոր ընթերցող մ'է Տիար Մ. Զերապի Առմէնիին և համոզիր է Հայոց։ Ինքն իր վաթսնամեայ քաղաքագէտ մ'է և յանձն առած է իւր հրապարակային բանախօսութեանց մին նուիրել հայկական խնդրոյն։ Նոյն Համալսարանի ուսուցչական մարմնոյն ուրիշ մէկ անդամ, Prof. James Truax բարձրագոյն կարգին կանոնաւոր մէկ վիճարանութեան նիւթ տուաւ անցեալներ զՀայկական խնդիրն, և այսպէս մղեց մեր դատն ուսումնասիրելու այնքան ուսանողներ որոց շատք հանդերձեալ են բարձր դիրքեր գրաւել։

Մր. Ուէլլի երկար յօդուածէն, զոր հրատարակած Christian Advocate ի մէջ անցեալ ամիս, կը թարգմանեմք հետեւեալ տողերն

«Պէոլինի Վեհաժողովն ոչ ամենին ինչ Որ Հայք պահանջեցին շնորհեց այլ գրեթէ այնչափ ինչ որչափ Ռուսք Սան Սթէֆանօի դաշնագրութեան մէջ մուծած էին։ Պատրիարքն եպիսկոպոսական մարմնէն և ազգային ժողովէն արտօնեալ էր յանուն իւրեանց պահանջել ազգային կազմակերպութիւն մի, որ մինչև ցայժմ կայ մնայ նոցա միակ պաշտօնական ծրագիրն և որ իտէականն է դէպ յոր կը ձգտին այժմ և միշտ պիտի ձգտին նոցա ազգային իրաւք··։ Իրենց բոլոր նեղութեանց մէջ Հայք ոչ երբէք աւելի ամրթալի և անգութ վարմունք կրած էին քան ի ներկայիս·· և թէպէտ բոլոր աշխարհի վերայ ցրուած, ոտքի կ'ելլեն միաձայն պահանջելու իրենց իրաւունքն ազատութեան և հայրենի հողոյն··· Նիւ Եորքի Հայք կոչումբրին մեր Ուաշինկթընի Կառավարութեան մեր դժգոհութիւնն, իբր ազգ, արտայայտելու ի մասին հալածանացն զորս նախնական քրիստոնեայ ժողովուրդ մի կը կրէ Թրքին ձեռքէն, և ամէն մարդասիրական արտայայտութիւն մեր աշխարհական և կրօնական մամլոյ կողմանէ շատ հաճելի է նոցա։ Ի վեր քան զամենայն, թող մեր բեմք խօսին այս նիւթոց վերայ իրենց ժողովրդոց և ստիպեն զայնս ուսումնասիրել խնդիրն, և օգնեն պատրաստել Հայոց նպաստաւոր հանրային կարծիք մի որ միանալով ընդհանրական ճնշման ընդդէմ Թրքին, սա հարկադրի տեղի տալու։»

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԼՈՒԵՐ

Մ. Միսիրեան, որ իբր Անգլիոյ հիւպատոսական գործիչ պաշտօն կը վարէ ի Պանտրմա, բերուեցաւ ի Կ. Պոլիս։ Շաբաթ մ'առաջ նմա ուղղեալ ոչ սակաւ նամակք Թրքական կառավարութեան կողմանէ բռնուած էին, ի մէջ որոց գտնուած էր Եւրոպայի Հայ Ցանձնախմբոց միոյն տպագիր մէկ թուղթն։ Այսպիսի թղթեր շարունակ կուգան քաղաքիս պատուաւոր անձանց չատերուն։ Միսիրեան ձեռբակալուելով ի Պրուսա տարուած և բանտարկուած էր։ Սըր Ուիլեըմ Հուայթ իմանալով եղելութիւնն, Ներքին Գործոց Նախարարէն պահանջեց նորա անմիջական արձակումն։ Նախարարն պատասխանեց թէ ինքն ոչինչ կարող էր ընել ըստ որում Կայսերական հրամանաւ գործուած էր ձերբակալումն։ Իսկոյն դեսպանն իւր վճռական պահանջն ծանոյց Մեծ Եպարքոսին, որ նոյն հետայն հեռագրով հրամայեց Միսիրեանի արձակումն։ Դէպքին կարևորութիւնն յայնմ կը կայանայ զի եթէ Միսիրեան Անգլիական պաշտօնէի հանգամանք չիրէր, կրնար ամիսներով ի բանտի մնալ։

Երզրումի մէջ Թուրքերն նորէն գումարումներ կ'ընեն, և կ'ըսուի թէ քրիստոնէից վերայ ընդհանուր յարձակում մ'ընելու խնդիրն վիճարանութեան նիւթ ըրած են։ Բուրտ Պէկ ոմն վերջերս ըսած է կառավարական Հայ պաշտօնէի մի թէ Կ. Պոլսէն հրահանգ ընդունած են գաղտնապէս սպաննել Հայեր և նոցա դիակներ թագուցանել։

Daily News.

Փարիզի Temps ն Յունվ. 20 ի թուոյն մէջ կը հրատարակէ հետեւեալ հեռագիրն Կ. Պոլսէն։—Սուլթանն Հայոց ընդհանուր ներողութիւն շնորհած է։ 76 դատապարտեալք յանձնուած են Պատրիարքարանին։ Պատրիարքն

հեռագրած է թեմերուն գթութեան այս արարքն և հրամայած է որ աղօթք մատուցուին Իպատիւ Սուլթանին։

Առաջին անգամ կը լսեմք Իպատիւ մէկու մի աղօթք ընելու տարօրինակ բացառութիւնն, որ սակայն առանց նուրբ նշանակութեան չէ այս պարագայի մէջ։

Լոնտոնի «Թայմզը.» Յունվար 17ի թուոյն մէջ կը հրատարակէ օրինակի Պոլսոյ Կեդրոնական Յանձնախմբին յայտարարութեան, զոր գալոնապէս պատերու վերայ փակցուցած և ցրուած են Պոլսոյ մէջ։ Այս Յայտարարութեամբ կը բողոքեն գոհութեան թուղթ յանուն ազգին ստորագրող երեւելեաց դէմ, և կ'ըսեն թէ բաց ի եկեղեցական Համագումարէն և ազգային ժողովէն ոչ ոք իրաւունք ունի յանուն ազգին խօսելու։

Ընդունեցանք Նիւ-Եորք թղթատուէն 3 թալէրի և 70 սենթ մանտափօսթ մի փոխանակ 4 թալէրի, իբր երկու բաժանորդագին։ Նաև ընդունեցանք մէկ թալէր և 80 սենթ իբր մէկ բաժանորդագին։ Կ'երևի թէ երբ ուրիշ երկրի թղթատան միջոցաւ կուգայ մանտափօսթն փոխանակ ուղղակի Նիւ-Եորքի վերայ քաշուելու, միջնորդ թղթատունն ևս վարձք մի կ'ընդունի։ Ուրեմն լաւ է որ Եւրոպայէն դրամ յղող մերազնեայք յիշեն թէ երկու թալէր հաւասար է 10 ֆրանք և 13 սանթիմի, և եթէ 10 ֆրանք և 25 սանթիմ ճամբայ հանեն, մեզ կը հասնի իբր ճիշդ գինն։

ՆՈՐԷՆ ՀԱՒԱՏԱ ՄԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՐ։ Պոլսոյ Ապահովութեան Սնտուկին անօրէնի օգնական Լեւոն Պէյ Փափազեան և փաստաբան Թընկըր Սիմոն Էֆ. հանրագիր մի մատուցած են ի կայսերական պալատ, ստորագրեալ բազմաթիւ մեծ ու փոքր պաշտօնեաներէ, վաճառականներէ, սեղանաւորներէ և փաստաբաններէ, ԱՐԵՒԵԼՔ հրատարակած է հանրագրին պատճէնն, յորում ըսուած է թէ Հայերն «երջանկութեան ծայրն հասած են» և թէ «գիշեր ցերեկ մեր ժամանակը կանցուննք աղօթելով վասն կենաց և բարօրութեան ձորդ Վեհափառութեան։» Սուլթանն ինչան իւր բարձր գոհանակութեան խմթեաց պատուանշանի արծաթ շքադրամը շնորհած է Լեւոն Պէյի և Թընկըր Սիմոն Էֆէնտիի։

ԿԱՐԵՒՈՐ ՈՐՈՇՈՒՄ ՄԻ

Հայկական միութեան Յունվար 31 ի նստին ներկայ լինելով Արժ. Հայր Սարաճեան խօսեցաւ այն կենսական խնդրոյ վերայ զոր մեծ. Պ. Յակոբեան հրապարակ հանած էր «Հայք» ի 3 րդ թուոյն մէջ. որ է Հայ գործաւորաց վիճակն բարւոքելու խնդիրն։ Ուսոլրի գործաւոր ազգայնոց ներքութեանց ամէն որ ականատես հովիւն քաջ չատոնց բռնուած էր, որպէս գիտեմք, այս կենսական խնդրով, որում այժմ կը նուիրէ իւր ուշ և ուրուշ յետ աւարտած լինելոյ զչինութիւն Ս. Փրկիչ եկեղեցւոյն։ Ճշմարիտ է Նորին Արժանապատուութեան դիտողութիւնն թէ մերազնեայ գաղթականաց մէկ մասն, բարեբաղդաբար մեծ մասն, հաստատապէս մտադիր է վերադառնալու ի Հայրենիս, և ուստի եթէ միջոց գտնեմք այսպիսեաց արհեստ սովրեցունելու, ոչ միայն կարող կը լինին աւելի դրամ շահելու և աւելի շուտով վերադառնալու առ սիրելիս, այլ և որոշ ինչ ընդհատ կարևոր է, սպառելի դրամին հետ միասին կը տանին արհեստ մի, անսպառ ապրիւր չահու, որով օգտակար կը հանդիսանան օտմանեան երկրին և միանգամայն կ'ազատին պանդխտելու դիւրագրգիռ հարկէն, իսկ այնպիսիք յոգդայնոց, որք երկար տարիներ յԱմերիկայ մնալու ստիպուած են կամ որոշած, կրնան թերևս լաւագոյն տարբերակ գործունէութեան դտնել հողագործութեան մէջ։

Հ. Սարաճեանի առնախօսութենէն յետոյ Հայկական Միութեան անդամներն ոչ սակաւք խօսեցան խնդրոյն զանազան կողմերուն վերայ և վերջապէս միաձայնութեամբ քուէարկուեցաւ հետեւեալ որոշումն։—

Նկատելով որ Արժ. Յ. Ծ. Վ. Սարաճեան Հայկական Միութեանս ներկայացոյց Հայ գաղթականութեան մէջ օրէ օր ստուարացող անգործ անձանց գործ հայթայթելու կարևոր և ծանր խնդիրը, և առ այս՝ յանձնախմբի մի պէտք, ծանուցանելով ևս թէ Տեարք Ս. Մ. Մինասեան և Ասլան Սահակեան այն խնդրոյն կարևորութիւնն ըմբռնելով յոժարութիւն յայտնած են գործակցիլ, ի մտի ունենալով մանաւանդ գաղթական Հայոց երկրագործութեան խնդիրն, կորոշեմք թէ,

Ա. Միութիւնս կը յայտնէ իւր ջերմ համակրութիւնը Արժ. Հայր Սարաճեանի գաղափարին, և

Բ. Միութիւնս իւր կողմանէ կը ներկայացունէ իւր Առենապետն և Առենադպիրն, ընտրս Պ. Յակոբեան և Յ. Ս. Թուշանեան, որ նորա և յիշեալ Պատ. Տիեարց հետ գործակցին կազմել կարող յանձնախումբ։ Ի կատարումն այսոր յոյժ կարևոր ձեռնարկի։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Լոյս տեսաւ Լոյս տեսաւ

ԼՈՅՍ ԵՒ ԽԱՒԱՐ

Գրեց — Հ. ԿԻՐԱԿՈՍ ԲԱՐԱԿԵԱՆ

136 երեսներէ բաղկացեալ գրքոյկ մ'է, որ կը խօսի Նոր Աշխարհի լուսոյն և խաւարին վրայ, լաւ եւ յոռի սովորութեանցն եւ բարուց վրայ, եւ յամառս կը բաղդատէ Ամերիկայի կացքն ու դնացքն արեւելից մէջ տեսնուածներուն։ Գինն է 25 սենթ, կեդրոնատեղին է Էկինեան տպարանը, 109 Սենթը Ըսթրիթ, Նիւ Եորք։

Ս. ՕՀԱՆՆԷՍԵԱՆ

Արեւելեան և Տեղական Նպարեղէններ

59 Ռաշինկթըն և 216 Էլսրիճ փողոցք։

LANTELM'S
Hotel and Restaurant,
10 UNION SQUARE, New York City
16 րդ և 17 րդ փողոցաց միջև, արեւելեան կողմն։
Նախաճաշ 40և ճաշ 75 սենթ. խնամարարութիւն գաղիական։

PHARMACIE FRANÇAISE,
NORBERT FRANCK,
331 7th Avenue, NEW YORK
Դեղ եւ քիմիական նիւթք.
Դեղագիրք կը պատրաստուին խնամով։

H. Eguinian,
BOOK AND JOB PRINTER.
100 Centre St., New York City.